ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ կենտրոնական բանկում աշխատել ցանկացողների համար

«Ֆինանսաբանկային կենտրոն» Հիմնադրամը, ՀՀ կենտրոնական բանկի պատվերով, **2013 թվականի հոկտեմբերի 21-ից** կազմակերպում է «ՀՀ կենտրոնական բանկ. ներածական դասընթաց» մեկ և կես ամիս տևողությամբ ուսումնական ծրագիրը:

Ծրագիրն ընձեռում է բացառիկ հնարավորություն խոստումնալից երիտասարդներին սկսելու իրենց կարիերան ՀՀ կենտրոնական բանկում, ձեռք բերելու ֆինանսական ոլորտի վերաբերյալ տեսական գիտելիքներ և գործնական հմտություններ: Ինտենսիվ դասընթացները հաջողությամբ ավարտած մասնակիցները հնարավորություն կստանան ընդունվելու աշխատանքի ՀՀ կենտրոնական բանկ, ընդգրկվելու ՀՀ կենտրոնական բանկի կադրային պահուստում:

Դասավանդումն իրականացնում եմ ՀՀ կենտրոնական բանկի առաջատար մասնագետները:

Ծրագրի ավարտին համակարգչային թեստավորման արդյունքում 70 և բարձր միավոր (100 հնարավորից) ապահոված ունկնդիրներին կտրամադրվի ավարտական վկայական՝ վավերացված ՀՀ կենտրոնական բանկի և «Ֆինանսաբանկային կենտրոն» Հիմնադրամի կողմից: 70-ից ցածր միավոր հավաքած ունկնդիրներին կտրամադրվի տեղեկանք՝ ուսումնական ծրագրին մասնակցելու վերաբերյալ:

ՀՀ կենտրոնական բանկը կարևորում է ուսումնական ծրագրի դիմորդների հետևյալ հատկանիշների առկայությունը.

- վերլուծական, հետազոտական ունակություն և մտածելակերպ,
- տրամաբանություն,
- հաղորդակցման հմտություն,
- օտար լեզուների իմացություն (անգլերեն, ռուսերեն և այլն):

Ուսումնական ծրագրին մասնակցել ցանկացողները պետք է «Ֆինանսաբանկային կենտրոն» Հիմնադրամ ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.

1. դիպլոմի բնօրինակը, միջուկը և դրանց պատճենները (2 օրինակ) կամ տեղեկանք ԲՈՒՀ-ից՝ ավարտական կուրսի ուսանող լինելու վերաբերյալ,
2. երկու լուսանկար (3x4 չափսի),
3. ինքնակենսագրություն կամ CV (2 օրինակ),
4. վկայագիր (գիտական աստիճան ունեցող անձանց դեպքում) (2 օրինակ),

5. անգլերենի իմացությունը հավաստող փաստաթուղթ (TOEFL, IELTS՝ առկայության դեպքում)
6. անձնագրի պատճենը՝ առաջին էջ և հաշվառման էջ (2 օրինակ),
7. զինգրքույկի պատճենը (առկայության դեպքում) կամ կցագրման վկայականի պատճենը (2 օրինակ):

Ուսումնական ծրագրին մասնակցելու համար կարող են դիմել միայն պետական և պետական հավատարմագիր ունեցող ԲՈՒՀ-երի շրջանավարտները:

Փաստաթղթերի ընդունումը՝ **հոկտեմբերի 1-ից 16-ը** (բացի շաբաթ և կիրակի օրերից), ժամը՝ **10:00-ից 19:00-ն**:

Ծրագրի արժեքը 110.000 ՀՀ դրամ է:

Պայմաններին մանրամասն ծանոթանալու նպատակով կարող եք զանգահարել 53-77-98, 53-77-40, 53-77-88 հեռախոսահամարներով կամ այցելել «Ֆինանսաբանկային կենտրոն» Հիմնադրամ:

Մեր հասցեն է՝ ք. Երևան, Ամիրյան 26, 3-րդ հարկ, էլ. փոստ՝ info@fbc-edu.am:

ՀՀ կենտրոնական բանկի Անձնակազմի կառավարման վարչություն
«Ֆինանսաբանկային կենտրոն» Հիմնադրամի Գրասենյակ